AUDIT & CONSULTING

Աուդիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա ԱԾ N 081՝ տրված ՀՀ ֆինանսների նախարարության կողմից

«ՊՐՈԳՐԵՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

Անկախ Աուդիտորի Եզրակացություն

Երևանի Ոսկերչական Գործարան-1 <Գնոմոն> ԲԲԸ
Բաժնետերերին

Մենք աուդիտի ենք ենթարկել Երևանի Ոսկերչական Գործարան-1 <Գնոմոն> ԲԲԸ-ի կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում՝ ֆինանսական հաշվետվությունների՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք

արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, ղեկավարության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մեր համոզմամբ՝ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Երևանի Ոսկերչական Գործարան-1 <Գնոմոն> ԲԲԸ-ի ֆինանսական վիճակը և նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքները ու դրամական հոսքերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

27 Ապրիլի 2016թ.

Խաչիկ Բեգլարյան

Գլխավոր տնօրեն

Արթուր Կիրակոսյան

Խմբի ղեկավար-աուդիտոր